# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 25

ԱՐՄԱՆՈՒՇ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ և 164-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արմանուշ Հայրապետյանի 30.11.2017 թվականի դիմումը

**Կարգադրում եմ**

1. Համայնքի մանկապարտեզի տնօրեն Արմանուշ Հայրապետյանին 2018 թվականի դեկտեմբերի 3-ից տրամադրել 2018 թվականի ամենամյա արձակուրդ 24 աշխատանային/նվազագույն,4 լրացուցիչ/օր տևողությամբ:

2. Աշխատանքի մեջ համարել 2019 թվականի հունվարի 10-ից:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

2018թ.
գ.Տանձուտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 132

ՖԱՀՐԱԴՅԱՆ ՌԱԶՄԻԿԻՆ ՀԱՍՑԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 16-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 18-ի թիվ 2 որոշումը և Ֆահրադյան Ռազմիկի 2018թ. դեկտմբերի 3-ի դիմումը

Որոշում եմ՝

1. Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի բնակիչ Ֆարադյան Ռազմիկին պատկանող տնամերձ հողամասին բնակելի տնով /ծածկագիր 04-092-0028-0017/ տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք 1 փողոց 23 տուն հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային ստորաբաժանում ՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

2018թ.
գ.Տանձուտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 131

## ՕՐԻՆԱԿԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տանձուտ համայնքի բնակիչ Խաչիկ Գևորգյանին սեփականության իրավունքի 0336826 վկայականով հատկացվել է 0,23հա տնամերձ հողամաս:Սակայն սեփականության իրավունքի վկայականի հատակագծում առանց գծային չափերի փոփոխության հողամասի մակերեսը կազմում է 0,2456հա :Տնամերձին կից ավել զբաղեցրած 0.0156 հա հողը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով խատեսված հողամասերի ցանկում ,չի խախտում անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով,ՏԻՄ -ի ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 32-րդ և հիմք ընդունելով Արտակ Գևորգյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Օրինական տնամերձին կից ավել զբաղեցրած 0.0156 հա հողը սեփականության իրավունքով անհատույց տրամադրել Խաչիկ Գևորգյանին ծածկագիր 04-092-033-004:

2. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ համապատասխան ստորաբաժանմաը գրանցել Խաչիկ Գևորգյանի՝ ծնված 1956 թվականին, Սաթենիկ Գալստյանի 1960թ, Արման Գևորգյանի 1978թ,Արտակ Գևորգյանի 1980թ, Քնքուշ Գևորգյանի 1982թ սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողի նկատմամբ տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

2018 թ.
գ.Տանձուտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 130

### <<ԱՎԱԶՊԼՅՈՒՍ>> ՍՊԸ-ԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի առաջին մասով, $244^{9}$-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տանձուտի համայնքապետարանի տեղակալի Մուշեղ Միքայելյանի 2018 թվականի նոյեմբերի 20-ի զեկուցագիրը Տանձուտ համայնքում 4,05հա ենթավարձակալության տրված հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու համար.

**_Որոշում եմ՝_**

1. <<ԱՎԱԶՊԼՅՈՒՍ>> ՍՊԸ-ին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ նշանակել վարչական տույժ մեկ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ.
գ.Տանձուտ